



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԱՒՍՏՐԱԼԻՈՅ ԵՒ ՆՈՐ ԶԵԼԱՆՏԱՅԻ**  
**DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AUSTRALIA & NEW ZEALAND**

**Առաջնորդ՝**  
**ՀԱՅԿԱԶՈՒՆ ԱՐՔԵՂՍ ՆԱՃԱՐԵԱՆ**

**Primate**  
**ARCHBISHOP HAIGAZOUN NAJARIAN**

**ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ**

Մոյն հաղորդագրությամբ կը տեղեկացնենք աստրալահայ համայնքը, որ ՆՍՕՏՏ Գարեգին Բ., Ծայրագոյն Պատրիարք եւ Կաթողիկոս Ամենայն Հայոց, Աստրալիոյ եւ Նոր Զելանտայի Հայոց թեմի Առաջնորդի թեկնածութեան համար Թեմական Խորհուրդին շնորհեց եռանուն ցանկ մը, որպէսզի Թեմական Խորհուրդը յարմարագոյն թեկնածուն ընտրէր թեմին նոր Առաջնորդ: Այդ անուանացանկը կը ներառէր հետեւեալ հոգեւոր հայրերը.

Գերշ Տէր Նարեկ Եպիսկոպոս Պերպլեան – Առաջնորդ Պրագիլիոյ Հայոց Թեմին  
Գերշ Տէր Վարդան Եպիսկոպոս Նաւասարդեան – Առաջնորդ Պալթեան Երկիրներու Հայոց Թեմին:  
Հոգշ Տէր Զաքարիա Ծայրագոյն Վարդապետ Բաղումեան – Ս. Էջմիածին

Հետեւելով Վեհափառ հօր խորհուրդին, ծանօթացման նպատակով, Նոյեմբեր եւ Դեկտեմբեր 2024-ին, Թեմական Խորհուրդը Աստրալիա հրաւիրեց երեք թեկնածուները, որոնք պատարագեցին, հանդիպումներ ունեցան հոգեւոր հովիւներուն, ծխական խորհուրդի անդամներուն, երիտասարդներուն եւ աստրալահայ համայնքի անդամներուն հետ:

Թեմական Խորհուրդը ունեցաւ պաշտօնական ժողովներ եւ խորհրդակցութիւններ երեք թեկնածուներուն հետ, նկատի առաւ քահանայ հայրերուն եւ չորս ծխական խորհուրդներու ատենապետներուն կարծիքներն ու տպաւորութիւնները, ապա, իր 23 Դեկտեմբեր 2024ի արտահերթ ժողովին, գաղտնի քուէարկութեամբ, միաձայնութեամբ ընտրեց Գերաշնորհ Տէր Վարդան Եպիսկոպոս Նաւասարդեանը որպէս Առաջնորդ թեմի: Ընտրութեան արդիւնքները անմիջապէս փոխանցուեցան Նորին Սրբութեան:

Վեհափառ Հայրապետը, իր 31 Յունուար 2025 թուակիր օրհնաբեր նամակով վաւերացուց եւ նշանակեց Գերաշնորհ Տէր Վարդան Եպիսկոպոս Նաւասարդեանը Առաջնորդ Աստրալիոյ եւ Նոր Զելանտայի Հայոց Թեմին:

Ապագայ հաղորդագրությամբ յաւելեալ տեղեկութիւն կը փոխանցենք Վարդան Սրբազանի Առաջնորդի հանգամանքով Աստրալիա ժամանման, ինչպէս նաեւ յարակից այլ մանրամասնութիւններու մասին:

**Դիւան**  
**Աստրալիոյ եւ Նոր Զելանտայի Հայոց Առաջնորդարանի**  
**1 Փետրուար 2025**